ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվարի 7-ից մինչև 2023 թվականի մայիսի 7-ը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Մարինա Մանուկյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

1. Հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում մասնակցում եմ անձնական օգնականի ծառայության ներդրման պիլոտային ծրագրի համակարգման աշխատանքներին և տարաբնույթ առցանց և առկա քննարկումներին:

Մասնավորապես՝

Յունիսեֆի աջակցությամբ կազմակերպվել է հանրային քննարկում Անի Պլազա հյուրանոցում, որին մասնակցել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային իստիտուտի, ՄՍԾ-ի, ՀՀ Ազգային Ժողովի, ՄԱԿ-ի, USAID-ի, ԿԳՄՍ նախարարության, ՀԿ-ների ներկայացուցիչներ, հաշմանդամություն ունեցող անձինք և ծնողներ: Ընդհանուր առմամբ մասնակիցների թիվը կազմել է շուրջ 100 հոգի:

Մասնակցել եմ Վրաստանի հետ առցանց քննարկմանը՝ իրենց երկրում արդեն իրականացվող անձնական օգնականի ծառայության տրամադրման փորձի փոխանակման նպատակով:

Կազմակերպվել է առցանց քննարկում ԱՍՀ նախարարության հետ պայմանագիր կնքած անձնական օգնականի ծառայություն տրամադրող ՀԿ-ների հետ՝ պիլոտային ծրագրի կազմակերպման գործընթացում իրենց փորձը և խոչընդոտները հաշվի առնելու նպատակով:

Ուղարկել եմ գրություններ ՄՍԾ՝ աշխատանք փնտրող անձանց տվյալների ստացման վերաբերյալ, որոնք ֆիլտրման արդյունքում պետք է ընդգրկվեն անձնական օգնականների վերապատրաստման դասընթացների գործընթացի մեջ, և «Նորք» ՍԾՏԻԿ՝ ֆունկցիոնալության գնայիատման նոր՝ e-disability համակարգից ՖՄԴ-ով գնահատված ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների ստացման վերաբերյալ, որոնք ֆիլտրման և իրենց կամ իրենց հարազատի համաձայնության արդյունքում կընդգրկվեն անձնական օգնականի ներդրման պիլոտային ծրագրի դաշտային աշխատանքներում:

Անձնական օգնականի ծառայության տրամադրման պիլոտային ծրագրի իրականացման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

2. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների, անձնական օգնականի ծառայության ներդրման և մի շարք այլ հարցերի վերաբերյալ :

3. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ ՀԿ-ների կողմից ներկայացված («Կարիտաս-Արեգակ» ՀԿ, «Մայրի» ՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ և բազմաթիվ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Փորձագետ՝ Մարինա Մանուկյան

10.05.2023թ.

Գլխավոր ՔՏ
լսած՝